

Աշխարհագրություն առարկայի օլիմպիադա
դպրոցական փուլ - տևողությունը – 100 րոպե

9 – րդ դասարան

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

- 1. Եթե քարտեզի անվանական մասշտաբը 1 սմ-ում 20 կմ է, ապա դրա թվային մասշտաբը կլինի.**
 1. 1 : 20 000
 2. 1 : 200 000
 3. 1 : 2 000 000
 4. 1 : 20 000 000
- 2. Մեկիության և մահացության տարբերությունը կոչվում է.**
 1. բնակչության մեխանիկական աճ
 2. բնակչության միգրացիա
 3. բնակչության վերարտադրություն
 4. բնակչության բնական աճ
- 3. Ո՞ր զուգահեռականն է ավելի երկար.**
 1. 20⁰
 2. 0⁰
 3. 50⁰
 4. 80⁰
- 4. ՀՀ տարածքում տրված ջրամբարներից ո՞րն է ամենախոշորը.**
 1. Ապարանի
 2. Կեչուտի
 3. Տոլորսի
 4. Սպանդարյանի
- 5. Նստվածքային անօրգանական ծագման ապար է.**
 1. քարածուխը
 2. տուֆը
 3. մարմարը
 4. կավը
- 6. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հռչակվել է.**
 1. 1991 թ. հուլիսի 5-ին
 2. 1991 թ. մայիսի 9-ին
 3. 1991 թ. մայիսի 28 – ին
 4. 1991 թ. սեպտեմբերի 2-ին
- 7. <<Ճողովուրդ – լեզվաընտանիք>> զույգերից ընտրել սխալը.**
 1. գերմանացի – հնդեվրոպական
 2. թուրք – ավթայան
 3. մոնղոլ – չին-տիբեթական
 4. արաբ – սեմաքամյան
- 8. Բնութագրումով որոշել պետությունը.**

Տարածքով գերիտոշոր պետություն է: Հարուստ է ջրային և անտառային ռեսուրսներով:
Աչքի է ընկնում երկաթաքարի արդյունահանմամբ և արտահանմամբ: Ո՞ր պետությունն է:

 1. Բրազիլիա
 2. Եգիպտոս
 3. Ավստրալիա
 4. Չինաստան
- 9. Մուսսոնային կլիմային բնորոշ են.**
 1. տաք ու չոր ամառները
 2. ցուրտ և խոնավ ձմեռները
 3. մեղմ ու չոր ամառները
 4. ցուրտ ու չոր ձմեռները
- 10. Ծալքավոր, երիտասարդ լեռնաշղթաներ են.**
 1. Մկանդինավյանը և Ուրալյանը
 2. Ատլասը և Ալպերը
 3. Դրակոնյանը և Ապալաչները
 4. Տյան Շանը և Մեծ Ջրբաժանը
- 11. Ո՞ր պնդումն է սխալ.**
 1. Ջարգացած երկրներում, բնակչության սեռային կազմում, կանանց թիվը գերազանցում է տղամարդկանց թվին:
 2. Եվրոպական երկրներում ձևավորվել է բնակչության վերարտադրության առաջին տիպը:
 3. Վերարտադրությունը կոչվում է պարզ, երբ ծնելիությունը հավասար է մահացությանը:
 4. Ջարգացող երկրներին բնորոշ է նեղ հիմքով, համեմատաբար լայն գագաթով սեռատարիքային բուրգը:
- 12. Պրերիաները ո՞ր մայրցամաքում են.**
 1. Հյուսիսային Ամերիկայում
 2. Հարավային Ամերիկայում
 3. Եվրասիայում
 4. Ավստրալիայում

13. Տեխնիկական մշակաբույս է.

1. կարտոֆիլը 2. արևածաղիկը 3. եգիպտացորենը 4. վարսակը

14. Կլիմայական ո՞ր գոտին է բացակայում Աֆրիկայում.

1. հասարակածային 2. բարեխառն 3. արևադարձային 4. մերձարևադարձային

15. ՀՀ-ում գունավոր մետաղաձուլության ճյուղ չէ.

1. մոլիբդենի արդյունաբերությունը 2. պղնձաձուլությունը
3. ոսկու արդյունաբերությունը 4. ցինկի արդյունաբերությունը

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Օդի բացարձակ խոնավությունը 20 գ/մ³ է, իսկ այն հազեցնելու համար անհրաժեշտ է 40գ: Որոշել օդի հարաբերական խոնավությունը:
17. Գետի կենդանի կտրվածքի մակերեսը 3 մ² է, իսկ ջրի արագությունը՝ 4 մ/վրկ: Որոշել գետի ծախսը (մ³/վրկ):
18. Երկրի տարածքը 48 000 կմ² է, իսկ բնակչության թիվը՝ 2.4 մլն մարդ: Որոշել բնակչության միջին խտությունը:
19. Երկրում քաղաքաբնակների բացարձակ թիվը 24 մլն է, իսկ ամբողջ բնակչության թիվը՝ 30 մլն: Որոշել երկրի ուրբանիզացման մակարդակը:
20. Երկու քաղաքներ գտնվում են նույն միջօրեականի վրա: Դրանցից մեկը գտնվում է հյուսիսային լայնության 5⁰–ի վրա, իսկ մյուսը՝ հարավային լայնության 4⁰–ի վրա: Որոշել քաղաքների միջև եղած հեռավորությունը կիլոմետրով:

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝

Արսեն Գրիգորյան